**Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Հողմիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի, հասարակագիտությանան, անգլերենի ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1 դիմում (Ձեւ 1),

2 մեկ լուսանկար 3x4 չափի,

3 բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

4 անձը հաստատող փաստաթուղթ, - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապա տասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկա յության դեպքում),

5 ինքնակենսագրություն (Ձև 5), այլ պետությունների քաղաքացինե րը՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,

6. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

7.որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 21-ից մինչև սեպտեմբերի 3-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 5-ին ժամը՝ 14:00-ին, ՀՀ Շիրակի մարզի Հողմիկի միջնակարգ դպրոցում: Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 41-42-03 հեռախոսահամարով: